

Վ. Կ. Ոսկանյան

ՆՅՈՒԹԵՐ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԱՐԻԻՎՆԵՐԻՑ (ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՐԻԻՎՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ)

Ռուսաստանն ու Ուկրաինան եղել են այն երկրները, ուր դարեր շարունակ զնացել են հայ պանդուխտների ու փախստականների հակայական զանգվածներ՝ հյուրընկալելով ու պատսպարվելով ուս և ուկրաինական օտարասեր աշխատավորության կողմից: Հարյուրավոր քաղաքներում ու գյուղերում ստեղծվում են հայկական դադուխտավայրեր, որոնք սերտ կապերի մեջ են մտնում իրենց երկրորդ հայրենիքի հետ, ծխացնում տնտեսական ու կուլտուրական կյանքի նոր օջախներ:

Հայաստանի պատմության մղձավանջային ժամանակաշրջանում, երբ ընկնում էին պետականության վերջին բեկորները, բնաջնջվում, տեղահանվում բնակչությունը, ասպատակվում, ավերվում, հրկիզվում քաղաքներն ու գյուղերը, երբ զեզերադացիա էին ապրում տնտեսությունն ու կուլտուրան՝ դադուխտներում հայ բազմությունները ոչ միայն փրկում էին իրենց ֆիզիկական գոյությունը, այլև շարունակում էին կյանքի հարարերականորեն նորմալ ընթացքը, դարձացնելով նյութական ու հոգևոր մշակույթը, սովորում հարեաններից. ընկալում կրեմոստքի համեմատաբար բարձր կուլտուրան, վերցնում ու տալիս արտադրական հմտություններ, փորձ, տրագիցիաներ: Երգումներում ստեղծվում էին զրականության, արվեստի ու ճարտարապետության նոր կոթողներ, մտավոր աշխատանքի մարդկանց նոր սերունդներ, որոնք զինված հայրենի մշակույթի բազմադարյան արժեքներով, բեղմնավորվում, հարստանում ու արիանում էին նոր ու անծանոթ զազափարներով: Պահպանելով կապը մայր երկրի հետ, մտահոգված հայրենակիցների ծանր վիճակով, դադուխտության առաջավոր զանգվածները ելք էին փնտրում՝ հայրենիքը և հարազատ ժողովրդին փրկելու համար:

Շրջահայաց ու աշխարհիմաց պրոգրեսիվ գործիչները ընկալում էին երկրների ու պետությունների մեջ կատարվող տեղաշարժերը, տեսնում հասարակության մեջ ծնվող նոր հարարերությունները, բուրժուական կապերի ծագումն ու ամրապնդումը, ազգային կոնսոլիդացման ու ազգային պետությունների մեջ կատարվող տեղաշարժերը, տեսնում հասարակության մեջ ծնվող նոր հարարերությունները, բուրժուական կապերի ծագումն ու ամրապնդումը, ազգային կոնսոլիդացման ու ազգային պետությունների ստեղծման ուղադրավ փաստերը և ազատագրական շարժումները: Մոտիկից շփվելով առաջավոր երկրների կյանքին, կապեր հաստատելով պրոգրեսիվ գործիչների հետ, ծանոթանալով միջազգային հարարերություններին ու զիվանագիտական անցուղարձին՝ առաջատար դադուխտային մտավորականությունը կանգնում է հայրենի երկրի օտար լծից ազատելու միջոցներ որոնելու ճանապարհին, խորհում, երազում, գործում, զիմումներ անում, բանակցում միջազգային փոխհարաբերու-

թյուններում դեր կատարող նշանավոր մարդկանց հետ՝ ակոսելով դեպի մեծ ու հզոր պետությունները տանող մայրուղիները: Գաղութահայությունը չի կրտրում իր բազմերանգ կապերը բնօրրանի հետ, գործակցում է հայրենի ժողովրդի այլևայլ գանգվածների հետ՝ ապրելով օրրստօրե ընդլայնվող ազգային կյանքով: Եվ ահա այս բոլոր դարերի ընթացքում իրենց արտահայտությունն են գտել հայ մատենագրության մեջ, դիվանագիտական գրագրություններում, գաղութների ինքնավարությունների ու դատարանների գործերում, ժամանակագրություններում, հիշատակարաններում, ուղեգրություններում, պատմական, աշխարհագրական, փիլիսոփայական ու գրական երկերում, անձնական ու պաշտոնական նամակներում, զանազան պետությունների ու քաղաքների գրասենյակային մատյաններում, դիվանագիտական ատյանների զեկուլցցներում... և այդ բոլորը ցրված աշխարհով մեկ՝ առավել շատ՝ Ռուսաստանի և Ուկրաինայի դիվաններում: Առանց այդ նյութերի բարձրացման, առանց հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության անհնարին կլինի մեր ժողովրդի համակրամանի պատմության գիտական շարագրությունը և ակադեմիական բազմահատորյակի ստեղծումը: Եթե մեր հայագետները քաջ ծանոթ են Մոսկվայի ու Լենինգրադի արխիվների հիմնական ֆոնդերին, ապա նրանք ավելի քիչ գիտեն մարզային արխիվները՝ Աստրախանի, Կազանի, Կիլվյարի, Արմավիրի, ինչպես և Կիևի, Խարկովի, Քիշինևի, Լվովի, Օդեսայի, Դնեպրոպետրովսկի արխիվները: Եթե նկատի առնենք, որ Ռուսաստանի, Ուկրաինայի և մյուս սոսակուրիկաների գրեթե բոլոր մարզային կենտրոններում և մայրաքաղաքներում կան բավական մեծ ու հարուստ արխիվներ, ապա հասկանալի կլինի, թե ինչպիսի անակնկալներ կարող են լինել ուսումնասիրողների համար:

Դրանում համոզվելու համար, բավական է ծանոթանալ այն արդյունավետ աշխատանքին, որ կատարում են Լվովի պատմաբանները հայ գաղթավայրերի ուսումնասիրության ուղղությամբ: Նրանք վերջին 3—4 տարվա ընթացքում հրատարակել են, արխիվային նյութերի հիման վրա զրված, մոտ 20 արժեքավոր հոդվածներ, պատրաստում են պաշտպանության համար 2 դիսերտացիա՝ մեկը Ուկրաինահայ գաղութների պատմագրության (Յա. Դաշկևիչ), մյուսը՝ Լվովի հայ արհեստավորների (Ն. Կրիվոնոս) մասին: Լվովի կենտրոնական պատմական արխիվի և մարզային արխիվի հարստությունների մասին որոշ պատկերացում են տալիս Պ. Խ. Պիրոժենկոյի և Գ. Ս. Սիզոնենկոյի հոդվածները¹, Կիևի և Լվովի արխիվներում պահվող «Արձանագրությունների մատյանները», որոնք իրենց վրա են հրավիրել սովետական և արտասահմանյան գիտնականների ուշագրությունը², խոստանալով՝ դիտությունն հաղորդել շատ նորություններ ոչ միայն հայոց, այլև ուկրաինական, լեհական, թաթարական պատմության վերաբերյալ: Նմանօրինակ ֆոնդեր ու գործեր շատ կան, և դրանք սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Մի քանի խոսք Օդեսայի մարզային արխիվի մասին, որտեղ միայն երկու շաբաթ աշխատելու բախտ ունեցանք 1961 թ. ամռանը և ծանոթացանք մի քանի ֆոնդերի բովանդակությանը: Արխիվի հարյուրավոր ֆոնդերի հարստության մասին պատկերացում կազմելու համար բավական է հիշել, որ այնտեղ պահվում

¹ Տե՛ս 1961 թ. հրատարակված «Исторические связи и дружба украинского и арм. народов» ժողովածուի մեջ, տես էջ 227—231:

² Նույն տեղում, Վ. Գրիգորյանի հոդվածը «Актовые книги армянского суда города Каменец-Подольского», էջ 252—268:

են մեզ հետաքրքրող շրջաններին՝ Հարավ-արևմտյան Ռուսիային և Ուկրաինային վերաբերող բազմաթիվ ֆոնդեր³։ Այս և այլ բազմաթիվ ֆոնդերում պահվող նյութերը վերաբերում են ինչպես Ուկրաինայի և Ռուսաստանի հայ գաղթավայրերին, այնպես և հայ-ռուսական և հայ-ուկրաինական տնտեսական, քաղաքական, կուլտուրական կապերին և ունեցուցիտն շարժումներին։ Բերենք մի քանի օրինակ. 1816 թ. № 10 գործում (ցուցակ 219) նյութեր կան Բախչիսարայի պալատի և ... Հին Ղրիմի հայ բնակիչներին օգնություն ցույց տալու մասին (գործը կազմված է 175 թերթից)։ 1805 թ. № 2, 1807 թ. № 4 և 1823 թ. № 2 գործերը (ցուցակ 221) վերաբերում են Ռոստովին, Նախիջևանին և այնտեղի հայերին (մոտ 300 թերթ)։ Բազմաթիվ գործեր կան հայ վաճառականների առևտրի, եկեղեցիների շինարարության, հայկական եկեղեցական եպարխիայի, դպրոցների ու այլ հարցերի մասին։ Հաճախ են հանդիպում հայտնի ազնվական-հողատեր, իսկական պետական խորհրդական Մանուկ-Բեյի տնտեսական գործարքներին ու իշխանությունների հետ նրա փոխհարաբերություններին վերաբերող գործեր։ 1849 թ. № 5 գործը ցույց է տալիս, որ Մանուկ-Բեյը պարտավորվել էր, բայց չէր կատարել հայկական դպրոցի շինարարությունը և շնայած դրան, ներքին գործոց մինիստրը մերժել էր դատախաչի հայցը Մանուկ-Բեյի նկատմամբ։ 1830 թ. № 6 գործը վերաբերում է Բեսարաբիայում նոր հայկական թեմ հիմնադրելուն և այն Նախիջևանի ու Բեսարաբիայի միացյալ թեմ անվանելուն, իսկ 1850 թ. № 8 գործից (ցուցակ 215) մենք տեղեկանում ենք Նախիջևանի ու Բեսարաբիայի եպարխիան (թեմը, եպիսկոպոսությունը) Քիշինևից նոր Նախիջևան փոխադրելու մասին։

Հետաքրքիր է 1833 թ. № 6 գործը՝ Բեսարաբիայում բնակվող մալականներին Անդրկովկաս վերաբնակեցնելու մասին (այն կարող է օգնել Հայաստանի ռուսական գաղթավայրերի ուսումնասիրողին)։

Օդեսայի քաղաքապետի գրասենյակի (ֆոնդ 2, ցուցակ 2) 1898 թ. № 2934 գործը վերնագրված է. «ս. Իսահակյանին և Ս. Միմոնյանցին բաց հսկողության ենթարկելու մասին» («О подчинении гласному надзору А. Исаакянца и С. Симонянца»)։ Նույն թվականի № 2941 գործը վերաբերում է Ա. Մոսեսովին և Ի. Աղա Միրզոևին, 2929 գործը՝ Ա. Միրզոյանցին և 1901 թ. 3133 գործը՝ Ա. Պետրոսյանին ուստիկանության բաց հսկողության տակ պահելուն։ Նույն ֆոնդի 1903 թ. 3257 գործը վերնագրված է. «Թուրքահայատակ Օ. Օհանեսին բանտում պահելու և բուլղարահայատակ Զագուրովսկուն արտասահման վտարելու մասին»։ Նույն թվականի № 3280 գործը «Կուռնոսովին, Միխայլովին, Կոչարյանցին, Վոլինսկուն, Զիլբերվադենին, Շպիլկային և այլոց Սիբիր աքսորելու մասին» է, իսկ 3294 գործը՝ Թ. Սլեպյանին և Պ. Փանսկուն պետական հանցագործության մեջ մեղադրելուն է վերաբերում։ 1904 թ. № 3445 գործը վերաբերում է «Պահպանության Կանոնադրության 33 հոդվածը Մ. Եորդելմանի և Ի. Լալայանցի նկատմամբ կիրառելուն»։ Իսահակ Լալայանցի մասին նյութեր կան նաև այլ ֆոնդերում։ Այսպես, 634 ֆոնդի № 107 գործում խոսվում է ՌՄԴԲՊ-ի Օդեսայի կոմիտեի և տպարանի ու գրքապահեստի հայտաբերման և ղեկավարներին ձերբակալելու և մեղադրելու մասին։ (Գործի 25—31 էջերը

³ Новороссийского и Бессарабского генерал-губернатора, Екатеринославской губернии, Таврической губернии, Одесского градоначальника, Управления временного Одесского генерал-губернатора և այլ բազմաթիվ ֆոնդեր։

վերաբերում են Լալայանցին՝ անձամբ)։ Սոցիալ-դեմոկրատներին քաջի հանդիպում են նաև այլ պարտիաների պատկանող հայ գործիչներին վերաբերող տեղեկությունները։ 634 ֆոնդի (Բուլղարահայատակ Ի. Կոսովիչի և Նովորոսիյսկի համալսարանի ուսանող Դ. Ն. Տեր-Հովհաննիսյանի մասին) № 153 գործը վերնագրված է «Սոցիալիստ-ռևոլյուցիոներների խմբի բացահայտումը»։

* * *

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Նովորոսիյսկի համալսարանի ուսանողությունը վերաբերող և մասնավորապես ուսանողների անձնական գործերը, որոնք մեզ պատկերացում են տալիս, թե ինչպիսի հսկայական նշանակություն են ունեցել ռուսական և ուկրաինական համալսարանները հայ ժողովրդի կուլտուրական կյանքում։ Ինչպես հայտնի է, Նովորոսիյսկի (այժմ Օդեսայի) Մեչնիկովի անվան համալսարանը կազմակերպվել է 1865 թ., Օդեսայի Ռիշիլևսկի լիցեյի (Решилевский лицей) բաղադրված։ Մեր երկրի այդ նշանավոր ուսումնական հաստատությունը պատրաստել է բազմահազար մասնագետներ, որոնց թվում հարյուրավոր հայեր, վրացիներ և ադրբեջանցիներ։ Համալսարանի գոյության առաջին հիսունամյակում այնտեղ սովորել է մոտ 500 հայ ուսանող։

Մենք ավելորդ ենք համարում հաղորդման մեջ բերել Նովորոսիյսկի (Օդեսայի) համալսարանի հայ ուսանողների ցուցակը՝ որը կազմված է ըստ նրանց անձնական գործերի հաջորդական համարակալման և նրանց վերաբերյալ տրվյալները պահվում են Նովորոսիյսկի համալսարանի հատուկ գործերում (ֆոնդ № 45, ցուցակ 5)։

Նախնական ծանոթությունը ցույց է տալիս, որ Օդեսայի համալսարանի հայ ուսանողության մեծագույն մասը ռուսահայ և ուկրաինահայ դադուիներին (Նոր Նախիջևան, Կիև, Խարկով, Աստրախան և այլն) և Անդրկովկասից է։ Հայ, վրացի և ադրբեջանցի երիտասարդները կրթվելով ու դաստիարակվելով ռուս-ուկրաինական քաղաքների կուլտուրական ոլորտներում և ստանալով մասնագիտություն՝ մեծ ծառայություն են մատուցել երկրի կյանքի բոլոր բնագավառներում։

Օդեսայի համալսարանի ֆոնդում պահվում են այնպիսի ականավոր մարդկանց գործեր, ինչպիսիք են՝ Նարիման Նարիմանովը (գործ № 9267), Պոռ Պերճի Պոռչյանը (գործ № 10768)։ Այնտեղ են սովորել ականավոր կովկասագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լևոն Մելիքսեյ-Բեկովը, Երևանի համալսարանի ռեկտոր Տիգրան Մուշեղյանը և ուրիշներ։ Հետաքրքիր է նաև այն, որ սովորողների մեջ եղել են բավական թվով հայ կանայք (Ալուջալովա Դ. Ն., Կասարովա Շ. Ա., Կասպարովա Ա. Կ., Բալասանովա Ա. Խ., Խորենսկայա Մ. Մ., Շախգեղանյան Մարիա Մովսեսի) և այլն։

Ինչպես հայտնի է, բազմաթիվ հայ ուսանողներ կրթություն են ստացել նաև մյուս ուկրաինական քաղաքներում՝ Կիևում, Խարկովում և այլն։ Գերմանաֆաշիստական օկուպացիայի ժամանակ ռմբակոծման են ենթարկվել Խարկովի արխիվները և անդամնալիորեն կորել են հարյուրավոր ֆոնդերի անգնահատելի արժեքները, այդ թվում՝ բոլորովին ոչնչացված է համալսարանի գործերի ֆոնդը։ Մենք հնարավորություն ունեցանք Խարկովի մարզային արխիվում ծանոթանալ մի քանի ֆոնդերի, որոնք ցույց են տալիս, որ այնտեղ, այնուամենայնիվ,

մնացել են շատ հետաքրքիր նյութեր՝ ոչ միայն ընդհանրապես, այլև մասնավորապես հայերի ու Հայաստանի մասին:

Այսպես, մենք ծանոթացանք Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտի դործերին և դուրս գրեցինք այնտեղ սովորած ուսանողների անունները (ավելի քան 150 հոգի): Հնարավորություն չունենալով հրապարակել Օդեսայի համալսարանի և Խարկովի Տեխնոլոգիական ինստիտուտի բոլոր հայ ուսանողների (650 հոգու) անունները, մենք կուզենայինք նշել մի քանի հանդամանքներ և բերել մի շարք անուններ՝ ենթադրելով, որ այդ հետաքրքիր կլինի հայոց պատմության նոր շրջանի մասնագետների և լեզվաբանների համար: Պետք է ասել, որ հաճախ դժվար է լինում միայն արխիվում կազմած ցուցակներով (описъ) որոշել ուսանողի ազգային պատկանելիությունը, քանի որ ուսականացած ձևով տրված ազգանունները երբեմն ապակողմնորոշում են (Абрамов, Азнауров, Габаев, Насибов և այլն), էլ չենք խոսում թարգմանվածների մասին (Иванов, Попов, Лазарев և այլն):

Այսպես, Օդեսայի արխիվի № 45 ֆոնդի № 26 գործը վերաբերում է ինչ-որ Աբրամխամովիչի, որի հայ լինելու մասին չէր կարելի անգամ ենթադրել, եթե դրա կողքին շիներ ազգանվան հայկական ձևն ու անունը (Աբրահամյան Վ. Ա.): Նմանօրինակ ազգանուններով հայ ուսանողների թիվը շատ է, բերենք միայն օրինակներ. Աբրահամով, Աբրամով, Աբելով, Ադամով, Ադնաուրով, Աքավերով, Ալաչալով, Արաբաչիև, Արեշև, Այվաղով, Բարխուդարով, Զուրաևով և նման բազմաթիվ անունների կողքին մենք գտնում ենք տիպիկ հայկական անուններ, որոնք ապացուցում են տվյալ ազգանունների հայկական լինելը. այսպես՝ Նասիրով (Նասիրյանց Ստեփան Աստվածատուրի), Պարեսով (Գևորգ), Պիրումով (Արմենակ), Պոպով (Մանուկ), Սաֆրազով (Պողոս), Տատեմով (Խաչատուր), Տեյմուրազով (Տեյմուրազյանց), Չերնիկով (Վահան), Յարիմ-Աղանով (Իրանենս Նիկողոսովիչ):

Նման օրինակներ շատ են նաև Խարկովի արխիվի գործերում. այսպես՝ Ախումով (Տիգրան), Մուբյաջի — Կազանշև (Օգանես Մարտիրոսովիչ), Շումաևով (Օվանես), Նարիմանով (Բագրատ), էստատով, Շիկանով և այլն, և այլն:

Արժի մեջ բերել նաև մի քանի ազգանուններ, որոնք այժմ քիչ են պատահում մեզանում և հետաքրքիր են անձնանուն-ազգանուններով զբաղվողների համար: Օդեսայի արխիվից՝ Ամասպուրով, Արգուտինսկի-Դուգոռուկով, Ասան-Ջալալյանց, Ասվադուրով-էրիվանցեզ, Բաշրեուկ-Մելիկով, Գիրլյան, Գլիլյան, Դատամյանց, Դանդուրյանց, Իշվորյանց, Կալյան, Լաչինյանց, Մեսյանց, Նարատյանց, Նախշունով, Ովասանով, Պարեսով, Ֆիլոսյանց, Խանդանյան, Յուրինյան, Յիգոյանց (Լուկյան Արուստյունովիչ), Եզնավորյան, Զուկուտյանց, Զուրայանց, Շախդինարով (Գևորգ), Շեկ-Օսեփյանց, Շիրադյանց, Շոշիյանց, էյրանյանց: Խարկովի արխիվից՝ Ակարակով, Ամիրադյանց, Դիլանջիանց (Խաչիկ), Խիձորյան, Զամոյանց, Կոկոյանց, Մինաս-Վարդապետով⁴, Շապոշնիկովյանց, Յարլոկյանց: Պետք է նկատել, որ վերջին երկու ազգանունները ձայնակցում են ուսահայ գաղութներում հաճախակի հանդիպող ազգանուններին՝ մատնելով նրանց գաղթային ծագումը: Այդ են վկայում Աստրախանի հայերի մեջ տարածված Շապոշնիկովյանց, Յարլոկյանց և նման ազգա-

4 Այս ազգանունը հավանարար սկիզբ է առել XVIII դ. առաջին կեսի հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ արքեպիսկոպոս Մինաս Վարդապետից:

նունները, որոնք ունեն ուսական արժատ և հայկական ածանց՝ վերջավորու-
թյունն: Օղեսայի ու Խարկովի նշված ֆոնդերի ազգանունների մի մասը հուշում
է նրանց կապը արհեստների և գրադմուռի՝ սոցիալական գրության հետ (Ներ-
կարարյան, Ֆարրիկանտով-Ֆարրիկյանց), մյուսը՝ քաղաքների և երկրների
հետ (Երևանցով, Վանեցով, Տարոնյանց, Ֆոկչանյանց, Նեմցեյանց, Խորասան-
յանց, Շիրազյանց, Շոշյանց և այլն), ցույց տալով հայերի աշխարհագրական
տեղարաշխումը, ծննդավայրը⁵:

* * *

Խարկովի արխիվում շատ նյութեր կան հարավային Ռուսաստանի ուսում-
նական հիմնարկների, այդ թվում և հայկական դպրոցների մասին: Այսպես,
բստ 1828 թ. 667 ֆոնդի (ցուցակ 288) № 1 գործի նախիջևանի հայկական ու-
սումնարանը ուսականին միացնելու վերաբերյալ գրադրություններն են կազմ-
վում (հիշենք, որ այդ շրջանում նախիջևանը, ինչպես և հարավային բազմաթիվ
մարզեր մտնում էին Խարկով ուսումնական օկրուգի մեջ): Ի՞նչանակցություններից
պարզվում է, որ Խարկովի ուսումնական օկրուգի հոգարարձուն, Խարկովի հա-
մախարանի ուսումնարանական կոմիտեն և Տազանրոգի գիմնադիայի դիրեկ-
տոր Ադոլֆ Մանենն ցանկանում էին նախիջևանի հայկական դպրոցը, (որը
ինքնուրույն միավոր էր — «до сих пор бывшего произвольно») միացնել
ուսական դպրոցին՝ համաձայն 1828 թ. մարտի 17-ի 133 գրության: Այդ նպա-
տակով Տազանրոգի առևտրական գիմնադիայի դիրեկտոր Ադոլֆ Մանենն մեկ-
նում է նախիջևան (իր պաշտոնը թողնելով գիմնադիայի ուսուցիչ Կալինովսկուն՝
հավանաբար լավ գիտենալով, որ միացման գործը կապված է լուրջ դժվարու-
թյունների հետ), սակայն, չի կարողանում կատարել իր միտքին՝ հայկական ինք-
նավարության դիմադրության պատճառով: Ուսումնարանական կոմիտեն հրաժ-
իր սպառնալով Ա. Մանենն հաղորդում է, որ ինքը մի քանի օր է, որ գտնվում է
նախիջևանում, բայց ուսումնարանները միավորել չի կարողանում, հայկական
մադիստրատոր և Խրմային գրադված են (տե՛ս նշված գործը, թերթի 66, էջ 2):

Ուսումնարանների միացման հարցը նորից բարձրացվում է 1832 թ. (նույն
թ., № 49 և 56 գործերում):

Նույնպիսի ուշագրավ փաստաթղթեր կան նաև Խարկովի մյուս արխիվում՝

⁵ Աստրախանի հայկական գերեզմանատան տապանագրերում մենք տեսանք և արտագրե-
ցինք բազմաթիվ նմանօրինակ ազգանուններ, ընդ որում գերեզմանաքարերի մի երեսին գրված
է հայերեն, մյուսին՝ ռուսերեն. այսպես Иванов — Իվանովյանց (Մկրտիչ Սարգսյան),
Гранильщикова — Կրանիլչիկյանց (Միրայի Հայրապետյան), Серебряков Артемий Павлович
— «Ցարոթիւն Պոզոսեան Սերբրյակեանց, Абелов — Աբելովյանց, Меляков — Մելիքով-
յանց, Чижов — Չիժովյանց և այլն:

⁶ Այս տեսակետից շատ հետաքրքիր են Աստրախանի գերեզմանատան տապանագրերը,
որոնցում պահպանված են վկայություններ այդ մասին: Այսպես, մի գերեզմանաքարի վրա գր-
ված է. «Աստրախանայ հայ Խաչատուր Զարարան Բորոյիկյանց, ծնաւ յամի 1848», կամ
«Շամուխի վաճառական հայ Շազապով Արտեմ Առաքիլովիչ», «Երուզայեցի Յակոբ Խոչառա-
սեանց», «Քավրիզցի Մելիքեանցեանց ... 1752—1836», Աստրախանցի Վանեցով՝ ծնված Բաբ-
վում (1792 թ.), Ներքենացով (1768—1852) և այլն: Այս ազգանունները բերում են, եկատի
ունենալով նաև այն, որ Աստրախանի հայկական գերեզմանը մեծ մասամբ արդեն քանդված էր
դեռևս 1958 թ., մնում էր 950—1000 գերեզմանաքար, դրանք էլ հանվում էին հասկանալի պատ-
ճառով (տե՛րեր չկան, գերեզմանատունը օգտագործվելու է այլ նպատակով):

Ուկրաինական ՍՍՌ-ի Կենտրոնական Պետական պատմական արխիվի ֆիլիալում (Харьковский филиал ЦГИА): Այսպես, «Խարկովի ուսումնական օկրուգի վարչության» ֆոնդ № 38 գործում նյութեր կան 1844 թ. գոյություն ունեցող մասնավոր դպրոցների մասին: № 47 գործը վերաբերում է կովկասյան մարզային զիննազիայում հայերեն, ֆրանսերեն և լատիներեն դասավանդելուն: № 58 գործում նյութեր կան նույն զիննազիայի զիրեկտորի պաշտոնում նահանգային քարտուղար Սերերբյակովին նշանակելու մասին: Ինչպես պարզվում է փաստաթղթերից, այդ Սերերբյակովը հայ է, հայտնի ազնվականական ընտանիքից⁷:

№ 59 գործից պարզվում է, որ Սերերբյակովը նշանակված է Կիզլյարի գավառային ուսումնարանի հոգաբարձու: № 66 գործը վերաբերում է Մոզգոլի գավառային դպրոցում հայ աշակերտներին կրոնի դասեր տալուն և այլն: Այս բոլորը հետաքրքիր են ոչ միայն դպրոցների, այլև հայ գաղութների պատմության տեսակետից: Մեր ուշադրությունը դրավեց մասնավորապես Գ. Պատկանովին վերաբերող գործը (ֆ. 939, գործ № 18), որից պարզվում է, որ ականավոր դրողը և մանկավարժը «Ռուսերենից հայերեն թարգմանության գործնական վարժություններ» է կազմել, ապա և այն տպագրության հանձնելու փորձեր է արել դեռևս 1840-ական թվականների սկզբին⁸:

Հետաքրքիրն այն է, որ Գ. Պատկանյանի նշված աշխատության և նրանում բերվող 1000 բառից բառարանի մասին շատ դրական կարծիք է հայտնել (Պետերբուրգի հայ և վրաց ֆիլոլոգիայի ամբիոնի գծով) ակադեմիկոս Մ. Ի. Բրոսսեն: Այդ մասին վկայություն է պահպանել «Կովկասյան մարզի և Ան ծովյան Արևելքի երկրի ուսումնարանների» զիրեկցիայի կողմից ժողովրդական լուսավորության միջնատրոյան Խարկովի ուսումնական օկրուգին հղած 1843 թ. փետրվարի 23-ի թվակիր գրության և այդ կապակցությամբ կատարված դրադրության մեջ: Բերենք դրանցից հիմնականը:

«Его сиятельству господину помощнику попечителя Харьковского учебного округа.

7 «Служивший почетным смотрителем Высшего уездного училища губернский секретарь Гаврил Михайлов сын Серебряков по фамулярному о службе его списку значится 49 лет, григорьянского вероисповедания, из дворян, в службу вступил в штате канцелярии 1819 г. сентября 6-го... Господином министром народного просвещения утвержден смотрителем уездного училища 1829 г. февраля 26 дня... В продолжении службы его всегда аттестовался способным и достойным, должность почетного смотрителя исполнял с постоянным усердием... В штрафах и под судом не находился...

Февраля 3 дня 1838 г.

Подпись обер-камергера, члена Государственного совета, попечителя Харьковского учебного округа, действительного тайного советника графа Головина.

Подпись, сургучевая печать»⁷.

Ֆոնդ 939, ցուցակ 43, գործ 47, թ. 6:

8 Այս մասին հիշատակությունը չկա Գ. Պատկանյանի մասին գրված հանգամանալից ուսումնասիրության մեջ՝ Եուզանիկ Նազարյանի «Գ. Պատկանյանի կյանքի ու գրական-հասարակական գործունեությունը» հոդվածում, որն հրատարակվել է «Բանբեր Մատենադարանի» 3 դրբում: Ե. Նազարյանը գրում է, որ «Գ. Պատկանյանը 1865 թվականից առաջ հրատարակության համար կազմել է նաև մի «Այբբենարան», ծանոթագրության մեջ նշելով, որ այդ «Այբբենարան»-ի ձեռագիրը չի պահպանվել (161), մեզ թվում է, որ և այբբենարանի և «Ռուսերենից հայերեն թարգմանության գործնական վարժությունների» ձեռնարկի հետքերը կարելի է գտնել Խարկովի արխիվներում, քանի որ ուսումնական գործերի ղեկավար կենտրոնը Խարկովում է եղել:

Состоящий в Кавказской областной гимназии учитель армянского языка армяно-григорианский священник Патканов, встречая при преподавании этого языка недостаток в учебных руководствах, употребил свободное от занятий время на составление такого руководства под заглавием «Практические упражнения в переводах с русского языка на армянский». Патканов, не имея средства напечатать составленное им руководство на свой счет, просит исходатайствовать распоряжения Высшего начальства о напечатании помянутого сочинения, которое он желает посвятить его высокопревосходительству господину С. С. Уварову, как покровителю словестности восточных языков.

Полагая, что труд священника Патканова может быть весьма полезен для всех учащих армянскому языку, честь имею представить составленное им руководство на начальническое Вашего сиятельства усмотрение и, если Ваше сиятельство со своей стороны изволит принять это руководство заслуживающим внимания и одобрения, то осмелюсь испрашивать распоряжения об отсылке означенного сочинения куда следует для процензурирования, а потом и напечатания на казенный счет, и об исходатайствовании дозволения посвятить оное имени его В. г. министра Народного Просвещения С. С. Уварова.

Директор училища Кавказской области Созонов».

Այս գրութիւնն ստանալուց հետո Պատկանովի ձեռագիրն ուղարկվել է էրատրա-օրդինար՝ ակադեմիկոս Բրոսսեին, որը մանրամասնորեն բնութագրել-գրախոսել է աշխատութիւնը: Այդ գրախոսականի բովանդակութիւնը շարագրել է Լուսավորութեան մինիստր Ուլարովը՝ իր պատասխան նամակում, որը բերում ենք որոշ կրճատումներով:

«Сочинение это состоит из трех различных отделов: первая—для переводов с русского языка на армянский, из нескольких примеров и из русско-армянского словаря самых употребительных слов. Первый отдел составлен с большим тщением и точностью, правила сходственности армянского языка с языком русским начертаны, как видно хорошо знаком с обеими языками. В прочем господин Броссе полагает, что для лучшего достижения предположенной автором цели подлежало бы дать гораздо больше объем второму отделу, который составляет в сочинении его восьмую главу, и приобщить к оному сокращенную хрестоматию, состоящую из семи глав, заключающих в себе постепенные примеры для переводов и упражнений. Ясно, что две страницы, посвященные им для примеров, слишком недостаточны. Что касается до третьего отдела, т. е. до словаря, то 1000 слов заключающихся в нем и собранных произвольно, ... приобщенный к сочинению подобного рода, должен представить по крайней мере алфавитный список всех слов, содержащих в других отделах, дабы ученик нашел соединенными под рукою все те сведения, которых ожидает от подобных сочинений упражнения. Соглашаясь со своей сто-

роны с отзывом, имею честь препроводить к Вашему сиятельству рукопись Патканова, покорнейше прося Вас, мил. г-рь, предложить автору воспользоваться замечаниями Броссе.

Министр Народного Просвещения

Уваров»⁹.

Գրութեան վրա կա շտամպ և մակագրութիւն՝ «Дать знать о сем директору училища Кавказской области, для объявления Патканову».¹⁰

Համանման գրութիւններ ուղարկված են նաև Կովկասյան մարզի ուսումնարանի գիրեկտորին և Խարկովի ուսումնական օկրուգի վարչութեանը (տե՛ս թերթ 6—7)։

Հրատարակվող փաստաթուղթը ցույց է տալիս, որ Գ. Պատկանյանը իր սաներին սովորեցնում էր ոչ միայն հայոց լեզու, այլև ձգտում էր լավ վարժեցնել ուսերենի մեջ՝ դաստիարակելով դրական-թարգմանչական հմտութիւններ ու ճաշակ, հարստացնելով բառապաշարը, դյուրացնելով նրանց աշխատանքը՝ իր ժամանակի համար այնքան կարևոր թարգմանիչներ պատրաստելու համար։

* * *

Ուկրաինական Կենտրոնական պատմական արխիվի Խարկովի ֆիլիալի № 791 ֆոնդում մենք գտանք 2 փաստաթուղթ, որոնք վերաբերում են ոչ թե գաղթավայրերին, այլ Հայաստանին։

Դրանցից մեկը վերաբերում է Ալեքսանդրապոլի գավառապետի օգնական Հանկոյի ս. Աննայի 2-րդ կարգի շքանշանով պարգևատրելուն։ Այդ փաստաթղթից երևում է, թե ինչպես Ալեքսանդրապոլի գավառում որոշ շինարարական աշխատանքներ են ձեռնարկվել՝ XIX դ. կեսերին ջրանցքներ ստեղծելու համար։ Այն բերում ենք առանց կրճատումների։

Копия с представления экспедиции Государственных имуществ г. Наместнику Кавказскому от 31 января 1852 года № 118.

От 28 сентября прошлого 1850 года № 783 Экспедиция Государственных имуществ честь имела Вашему Сиятельству донести, что водопроводная канава, начатая устройством по распоряжению Вашему в 1847-м году Эриванской губернии Александропольского уезда на Баздюганской и Мусуглинской степях, приведена в совершенное окончание, с чем вместе и оказалась возможность к оживлению сих степей, имеющих плодотворную почву и богатые пастбища водворением на них 200 семей поселян. Умножение какового поселения по извещению Г. Эриванского Военного Губернатора продолжалось и в прошлом году, потому что по пространству сих степей, заключающих в себе до 15 т. десятин может быть на оных водворено до 500 семей.

⁹ Տե՛ս թերթ 4։

¹⁰ Նույն տեղում, թերթ 4։

Успешному совершению сего полезного предприятия содействовал главнейше бывший помощник Александропольского уездного Начальника, находящийся ныне в таковой же должности в Елисаветпольском уезде, Коллежский Ассессор Ланко. Его усердием и деятельностью отвращены многие местные препятствия и взысканы все способы к скорому и прочному проведению сей канавы, на устройство которой заботливостью его произведены самые незначительные издержки, противу тех выгод, какие сею канавою приобретены, самые же работы производились под непосредственным и неутомимым его надзором, как за это равным образом и за представленный им проект об устройстве поселений, теперь уже исполненный, я признавал его в полной мере заслуживающим к удостоению Всемилостивейшего награждения, но не решался войти к Вашему Сиятельству с представлением доколе успешные последствия этого предприятия не оправдаются на самом деле.

Как по прошествии уже двух лет со времени окончания водопровода и с водворением там нескольких сот семейств, пользующихся исключительно водою из этой канавы, и в следствие отзыва мне состоящего при Вашем Сиятельстве, Надворного Советника Александровского, о Воле Вашей, дабы Г. Ланко был представлен за упомянутые труды его к награждению, я долгом поставляю представить на Ваше благоуважение, что по мнению моему, на основании 10-го пункта Статута об Ордене Св. Анны Коллежский Ассессор Ланко вполне заслуживает к удостоению его Всемилостивейшим награждением сим орденом 3-й степени, если по послужному списку нет препятствующих причин¹¹.

Նույն ֆոնդից բերվող երկրորդ փաստաթուղթը վերաբերում է 1854 թ. հիշված Լանկոյի (որն այդ ժամանակ արդեն դավառապետ էր) երկրորդ անգամ պարգևատրելուն, նկատի ունենալով 1853—1856 թվականների ոռոգ-թուրքահան (Ղրիմի) պատերազմի ժամանակ հայ-թուրքական ճակատի գործողություններին օգնելու համար նրա կատարած ծառայությունները (ճանապարհների կարգավորում, փոխադրական միջոցների, վառելիքի, մթերքների և ֆուրաժի հայթայթում և այլն)։

Հատկապես շեշտվում է Լանկոյի ծառայությունը Շորադյալի ժողովրդական միլիցիայի համար Ալեքսանդրապոլից կամավորների հավաքագրումը, և այդ միլիցիայի մի շարք գործողությունները իշխամու դեմ: Բերենք այդ փաստաթուղթը.

Копия с представления Командующего Корпусом Г. Генерал-Лейтенанта Князя Бебутова, Г-ну Генералу от Кавалерии Реаду, от 9-го июля 1854 года № 1281.

Александропольский уездный Начальник, Надворный Советник Ланко, несмотря на то, что служебные занятия его со времени начала военных действий на нашей границе весьма много увеличились, постоянно обращает на себя внимания необыкновенною деятельностью и благо-разумною распорядительностью.

¹¹ Филиал ЦГИА в Харькове, ф. 791, д. 371, л. 1—2.

При сборе войск в прошедшую осень и особенно во время передвижения их зимой, когда дороги в горных проходах заваливались глубоким снегом на несколько верст, Александропольский уездный Начальник весьма много облегчал следование войск своевременною расчисткою дорог и заготовлением перевозочных средств, в особенности же он выказал полное свое усердие и отличную распорядительность при снабжении войск всего отряда в продолжении 8-ми месяцев топливом и фуражом, что при недостатке дров в окрестностях Александрополя и после осенних беспокойств представляли чрезвычайные затруднения.

В последнее же время Надворный Советник Ланко обратил на себя внимание весьма удачным выбором людей для Шурагельской Милиции, которая, будучи сформирована им только 1-го июля успела с того времени уже несколько раз отличить себя во встречах с неприятелем.

Вообще Надворный Советник Ланко своим отличным усердием ревностною и существенно полезною службою вполне заслуживает поощрения Начальства, а потому, представляя при этом наградной список под Лит. «А» долгом считаю покорнейше просить Ваше Высокопревосходительство исходатайствовать Всемилоостивейше Александропольскому уездному Начальнику испрашиваемой награды.

Ланко награжден орденом Св. Анны 3 и 2 ст.¹²

Նգրափակելով մեր հաղորդումը պիտի ասենք, որ Կիևի, Դնեպրոպետրովսկի, Չերնովիցիի արևիվներում կատարած մեր նախնական հետախուզութիւնները վկայում են՝ հայերին վերաբերող կարևոր նյութերի գոյութեան հնարավորութեան մասին:

Պետք է հույս հայտնել, որ Ուկրաինայի ու Հայաստանի պատմաբանները, գործակցելով արևիվիստների հետ, կարող են նորանոր կարևոր փաստաթղթեր գտնել եղբայրական Ուկրաինայի դիվանների անսպառ ֆոնդերում:

¹² Филиал ЦГИА в Харькове, ф. 791, д. 371, лл. 3—4.